ՀԱՄԱՌՈՏ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

զանգվածային լրատվամիջոցների համար

2016 թ. սեպտեմբերի 24, ժամը՝ 11.00

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ ***Սամվել Հարությունյանի*** մամուլի ասուլիսը «Անկախության 25 տարիներ. գիտության ոլորտի ձեռքբերումները և հիմնախնդիրները» թեմայով

Ընդհանուր դրույթներ

2007 թվականի հոկտեմբերի 1-ին ՀՀ Նախագահի հրամանագրով ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմում ստեղծվեց նոր կառույց՝ գիտության պետական կոմիտեն:

Կոմիտեի ստեղծումն անհրաժեշտություն էր: Մինչ այդ գիտության կառավարման երեք տարբեր մեխանիզմներ էին գործում՝ ակադեմիական, ճյուղային և բուհական: Այս երեք համակարգերի միասնական կառավարման ինստիտուտ չկար, ինչը բազմաթիվ խնդիրների պատճառ էր դառնում:

Կոմիտեի ստեղծման հիմնական նպատակներից էր թերևս գիտության զարգացմանն ուղղված ընդհանուր քաղաքականության մշակումը:

ՀՀ կառավարության 2007 թ. հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշումով հաստատվեց Կոմիտեի կանոնադրությունը:

Հիմնական իրավական ակտեր

2007-2016 թթ. ընթացքում ընդունվել են կոմիտեի կողմից մշակված շուրջ 30 իրավական ակտեր, որոնցից՝ օրենք՝ 1, ՀՀ Նախագահի հրամանագիր՝ 2, ՀՀ կառավարության որոշում՝ 23 և այլն:

Ոլորտը կանոնակարգող հիմնական իրավական ակտերն են՝

Օրենքներ՝

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին
- Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին
- Գիտությունների ազգային ակադեմիայի մասին

ՀՀ կառավարության որոշումներ (շուրջ 23)՝

- «Գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին» (27.05.2010, N 20)
- «Հայագիտության զարգացման հայեցակարգին, հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025 թթ. ռազմավարությանը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» (12.01.2012, N 1)
- «Գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրին և միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» (17.06.2011, N 23):
- «ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թթ. գերակայություններին հավանություն տալու մասին» (25.12.2014, N 54)
- «Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» (18.03.2011, N 10)
- այլ:

Պետական ֆինանսավորման հիմնական ուղղություններ

Պետական ֆինանսավորումն իրականացվում է երեք հիմնական ուղղություններով:

1. Բազային ֆինանսավորում

Ֆինանսավորվում են պետական գիտական կազմակերպություններ և բուհեր:

2016 թ. դրությամբ ֆինանսավորվում է 199 բազային ծրագիր, 2 համատեղ լաբորատորիա, 1 համատեղ խումբ:

2. Նպատակային ֆինանսավորում

Ֆինանսավորվում են գիտական կազմակերպություններ և բուհեր:

2016 թ. դրությամբ ֆինանսավորվում է 15 նպատակային ծրագիր:

3. Թեմատիկ ֆինանսավորում

Ֆինանսավորվում են հետազոտական խմբեր (առավելագույնը՝ 5 հոգի), անհատ հետազոտողներ և ասպիրանտներ՝ գիտական կազմակերպություններից և բուհերից:

2016 թ. դրությամբ ֆինանսավորվում է 169 թեմա, 11 կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված թեմա (≥35% մասնավոր մասնաբաժնով), 6 երկկողմ ծրագիր՝ ՀՀ- ԼՂՀ, 5 ծրագիր «CANDLE» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի «AREAL» գծային արագացուցչի վրա իրականացվող, 5 ծրագիր Շիրակի մարզի կազմակերպությունների համար, բարձր արդյունավետությամբ աշխատող 97 գիտաշխատողի և 31 երիտասարդ գիտաշխատողի հավելավճարի տրամադրման ծրագիր:

Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման հայտերի մրցույթներում կատարվել են մի քանի արդյունավետ և կարևոր նորամուծություններ.

1. Թեմայի ֆինանսավորման ընդհանուր ծավալներն ավելացվել և համապատասխանեցվել են միջազգային չափանիշներին:

2. Ներդրվել է հայտերի լրացման և ընդունման առցանց համակարգ. գործընթացը դարձել է դյուրին և հեշտ կիրառելի, համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին:

3. Ներդրվել է հայտերի գնահատման անկախ փորձագիտական համակարգ:

4. Թեմայում ներդրվել է արտասահմանյան խորհրդատուի ինստիտուտ:

5. Հայտի ղեկավարին հնարավորություն է տրվել նշելու մինչև 3 անցանկալի փորձագետի անուն՝ նվազել է «շահերի բախում» իրավիճակների առկայության հնարավորությունը:

6. Հայտի փորձագիտական գնահատականի 15% ձևավորվում է գիտաչափական տվյալների հիման վրա:

7. Պարտադիր պայման է հանդիսանում նաև թիմի կազմում առնվազն մեկ երիտասարդ գիտնական ունենալը:

2015 թ.-ին ՀՀ կառավարության որոշմամբ գիտական և գիտատեխնիկական փորձաքննական գործունեության բնագավառում ՀՀ կառավարության լիազոր մարմին է սահմանվել գիտության պետական կոմիտեն:

Ընթացիկ ծրագրեր

1. Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված ծրագիր

Նպատակը՝ տնտեսության մեջ կիրառելի արդյունքի ձեռքբերումն է՝ մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով:

Նախագծի տևողությունը երկու տարի է: Ծրագիրն իրականացվում է 2011թ.-ից, առավելագույն ֆինանսավորումը՝ 30 մլն ՀՀ դրամ: Համաֆինանսավորումը մասնավոր հատվածից եղել է՝ 15% (2011-2013), 25% (2013-2015) և 35% (2015-2017): Ծրագրերն ընտրվում են անկախ փորձաքննության հիման վրա: 2011-2013 թթ. ստացվել է 42 հայտ, ֆինանսավորվել է 17 ծրագիր, 2013-2015թթ.՝ 32 հայտ, ֆինանսավորվել է 16 ծրագիր, 2015-2017 թթ.՝ 22 հայտ, ֆինանսավորվել է 11 ծրագիր:

2. Գիտության ոլորտ երիտասարդ հետազոտողների ներգրավվածության ծրագրեր

Ներդրվել են երիտասարդ գիտնականների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների ֆինանսավորման և անհատական աջակցության ծրագրեր: Թեմատիկ ֆինանսավորման մեջ, ինչպես նաև միջազգային հետազոտական ծրագրերում երիտասարդ հետազոտողների ներգրավվածության նվազագույն ցուցանիշը 25% է: Իրականացվում է երիտասարդ հետազոտողների ամառային դպրոցների, միջազգային կոնֆերանսների մասնակցության ֆինանսավորում:

ՀՀ կառավարության կողմից իրականացվել է երիտասարդ գիտնականների բնակարանային ապահովման ծրագիրը:

Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին ՀՀ Նախագահի հանձնարարությամբ տարեկան տրամադրվել է հավելյալ 100 միլիոն դրամ պետական բյուջեից:

3. Գիտական ենթակառուցվածքների արդիականացման ծրագիր

Ծրագիրն իրականացվում է պետական գիտահետազոտական ինստիտուտներում և բուհերում: Ծրագիրն ամենամյա է և իրականացվում է 2013 թ.-ից: Առավելագույն ֆինանսավորումը՝ 65 մլն ՀՀ դրամ: Ընտրությունը կատարվում է անկախ փորձաքննության հիման վրա: Նախապատվությունը տրվում է մասնավոր հատվածի կողմից համաֆինանսավորվող նախագծերին, ինչպես նաև մեկից ավելի գիտահետազոտական ինստիտուտ և բուհ ներգրավող նախագծերին:

4. Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման ծրագիր

Հավելավճար տրամադրվում է ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված առավել բարձր

արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների: Ծրագիրն ամենամյա է և իրականացվում է 2013 թ.-ից: Ընդհանուր ֆինանսավորումը՝162 մլն ՀՀ դրամ: Արդյունքում՝մինչև 100 գիտնականներ ամսական ստանում են 135000 ՀՀ դրամ հավելավճար՝ մեկ տարվա ընթացքում (2015 թ.-ին նմանատիպ մրցույթ է անցկացվել նաև մինչև 35 տարեկան երիտասարդ գիտաշխատողների համար. հավելավճար են ստացել 31 երիտասարդներ՝ 75000 ՀՀ դրամի չափով):

5. Գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ

2015 թվականի հունվարի 1-ից պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվում են հավելավճարներ՝ գիտությունների դոկտորին 50000 դրամի (նախկինում՝ 25000), գիտությունների թեկնածուին՝ 25000 դրամի (նախկինում՝ 12000) չափով:

Լայնամասշտաբ ծրագրեր

Ծրագրեր, որոնք էական ազդեցություն կունենան հետազոտությունների և մշակումների ընդհանուր բնագավառի վրա

1. Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)

Ռադիոիզոտոպների «CYCLONE 18/18» արագացուցիչը կգործի Ուռուցքաբանության ազգային կենտրոնում. կկատարվեն ուռուցքաբանական հիվանդությունների վաղ հայտնաբերում, նախատեսվում է նաև բժշկական կենտրոնի ստեղծում: Բժշկական հետազոտություններին զուգահեռ իրականացվելու են նաև միջուկային հետազոտություններ, ինչն այդ արագացուցիչը դարձնում է եզակի:

2. «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ

Նախատեսվում է կառուցել երկու սինքրոտրոնային լույսի արագացուցիչներ: 1-ին՝ Արեալ լազերային գիտահետազոտական գծային արագացուցչի կառուցումն ավարտվել է 2014 թ.:

Միջազգային համագործակցություն

2008-2016 թթ. ընթացքում կնքվել են 39 երկկողմ համագործակցության պայմանագրեր (ևս 34-ը՝ 1991-2004 թթ) ՝ CNRS (Ֆրանսիա), BMBF (Գերմանիա), RFBR (Ռուսաստան), FFR (Ռուսաստան), RFH (Ռուսաստան), SASII (Ուկրաինա), MST (Չինաստան), ICTP (Իտալիա) և այլ օտարերկրյա կազմակերպությունների հետ:

Ներկայում միջազգային երկկողմ ծրագրերի թվաքանակը՝ Արցախ՝ 6 դրամաշնորհ, Ֆրանսիա (CNRS)՝ 2 համատեղ լաբորատորիա, 1 միջազգային խումբ, Ռուսաստան (РГНФ)՝ 8 դրամաշնորհ, Ռուսաստան (РФФИ)՝ 25 դրամաշնորհ, Բելառուս (ГКНТ)՝ 1 նպատակային ծրագիր՝ 5 տարի տևողությամբ:

ՀՀ կառավարության 29.10.15 թ. N 1255–Ա որոշմամբ համաձայնություն է տրվել ԵՄ «Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցության մասին համաձայնագրի կնքմանը:

Համաձայնագիրը ստորագրվել է 2016 թ. մայիսի 19-ին: Այն հնարավորություն է տալիս գիտական կազմակերպություններին, բուհերին, ինչպես նաև անհատ գիտնականներին ու ասպիրանտներին՝ մասնակցել ամենաառաջնակարգ և կարևորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, խոշորամասշտաբ միջազգային գիտական համագործակցությունների աշխատանքներին, օգտվել եվրոպական գիտական կազմակերպությունների և համալսարանների ենթակառուցվածքներից, բարձրացնել տեխնոլոգիական ու նորարարական ունակությունները, գիտական հետազոտությունների մակարդակն ու արդյունավետությունը, ընդգրկվել գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման ու վերապատրաստման եվրոպական ծրագրերում, ավելացնել հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի արտաբյուջետային ֆինանսավորման ծավալները և այլն: «Հորիզոն-2020»-ի ընդհանուր ֆինանսական ծավալները կազմում են շուրջ 80 մլրդ եվրո՝ յոթ տարվա համար:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի
տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Բաժնի պետ՝ Գոհար Մելիքսեթյան
հեռ.՝ 210 140 +109, 091 012023
էլ. հասցե՝ pr.scs@scs.am
կայք՝ www.scs.am